ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2003 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովն (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (44 աշխատող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

սակագնային քաղաքականության վարչություն՝

-սակագնային բաժին,

-ֆինանսական վերլուծության բաժին.

իրավաբանական լիցենզիոն բաժին.

լիցենզավորված գործունեության մոնիթորինգի բաժին.

հասարակության հետ կապերի ծառայություն.

վարչատնտեսական ծառայություն:

1.Սակագնային քաղաքականություն

Էներգետիկայի բնագավառում գործող բոլոր սակագները շարունակվում են կարգավորվել հանձնաժողովի կողմից: Կարգավորվող սակագների կամ ծառայությունների համար վճարների մեծությունների ձևավորումը հիմնված է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա, որը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21 -րդ հոդվածի պահանջներից: Այն ենթադրում է սակագների միջոցով բոլոր ընկերությունների համար ձևավորել այնպիսի հասույթ, որը կբավարարի նրանց հուսալի և անվտանգ գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը, օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների իրատեսական ծառայության ժամկետից ելնելով՝ հաշվարկված մաշվածության հատուցումը, ինչպես նաև ներգրավված կապիտալի դիմաց որոշակի խելամիտ շահույթի ապահովումը:

Արտադրող-մեծածախ գնորդ օղակում էլեկտրաէներգիա արտադրող հինգ խոշոր կայանների և «Բարձրավոլտ ցանցեր» ՓԲԸ-ի համար շարունակում է գործել երկդրույք (հզորություն և էլեկտրաէներգիա) սակագնային համակարգը, որը թույլ է տալիս ապահովել ընկերությունների հաստատուն ծախսերի փոխհատուցումը՝ անկախ արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալից, ինչպես նաև փոփոխական ծախսերի փոխհատուցումը, որոնք անմիջապես կախված են արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալից:

Երկդրույք սակագնային համակարգը չի կիրառվում փոքր ՀԷԿ -երի, ՋորաՀԷԿ -ի և բաշխիչ ցանցի համար: Վերջնական սպառողների համար միադրույք սակագները տարբերակվում են ըստ լարման մակարդակի և օրվա ժամերի:

Հաշվի առնելով կարգավորվող ընկերությունների կողմից ֆինանսատնտեսական հաշվետվություններով և տեղեկատվություններով ներկայացված փաստացի ծախսերի վերլուծության արդյունքները, հանձնաժողովը 2002 թվականի սեպտեմբերի 1-ից սահմանել է էլեկտրաէներգիայի նոր ներհամակարգային սակագներ (արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի դրույքներ և հզորության ամսական վճարներ, փոխադրվող էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության վճար և ծառայության հաստատագրված ամսական վճար, «Հայէլցանց» ՓԲԸ -ին մեծածախ գնորդի կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի սակագին)՝ անփոփոխ թողնելով վերջնական սպառողների սակագները:

Հիմք ընդունելով «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, հանձնաժողովը մշակել և հաստատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման պահից տրվող էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, որտեղ ամրագրված են նաև սակագնային մարժայի ձևավորման հետևյալ սկզբունքները.

-մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում կգործի բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի ստորագրման պահին գործող անփոփոխ սակագնային մարժան՝ արտահայտված ԱՄՆ արժույթով.

-սկսած 2004 թվականի հունվարի 1-ից սակագնային մարժան կհաշվարկվի հանձնաժողովի կողմից ընդունված մեթոդաբանության համաձայն՝ փաստացի

կատարված ծախսերի վերլուծության արդյունքների և անկախ փորձագետների եզրակացության հիման վրա, բայց ոչ պակաս քան 1,5 ԱՄՆ ցենտ:

«ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարմանը հանձնելու կապակցությամբ «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը տրվել է արտադրության լիցենզիա և սահմանվել առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը:

Սահմանվել են նաև նոր կառուցված 3 փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի քվոտաները և սակագները: Ընթացքում է ևս մի քանի փոքր ՀԷԿ -երի սակագների վերանայումը:

Մշակվել է փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական բարեփոխմանը զուգընթաց, որոշակի փոփոխությունների կենթարկվի սակագնային համակարգը:

Ներկայումս աշխատանքներ են տարվում համակարգի օպերատորի և շուկային մատուցվող այլ ծառայությունների սակագների (վճարների) հաշվարկման մեթոդաբանության մշակման ուղղությամբ, և մինչև 2002 թվականի ավարտը նախատեսվում է սահմանել շուկային մատուցվող ծառայությունների սակագները (վճարները):

Ուսումնասիրելով 2001 թվականի և 2002 թվականի 8 ամիսների էներգետիկ հաշվեկշիռները, ինչպես նաև հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի ճյուղերի հեռանկարային զարգացման միտումները, հանձնաժողովի կողմից կազմվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2003 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (հավելվածներ NN1,2,3):

Ինչպես երևում է N1 հավելվածից, 2003 թվականին կանխատեսվում է նախորդ տարվա համեմատությամբ բարձր լարման էլեկտրացանցերում շուրջ 1,0% կորուստների նվազում՝ հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման շնորհիվ, իսկ բաշխիչ ցանցերում՝ շուրջ 3,0%՝ սպառված էլեկտրաէներգիայի հաշվառման վարչարարության բարելավման ճանապարհով:

Ընդհանուր առմամբ կանխատեսվում է ներքին շուկայում էլեկտրաէներգիայի սպառման 6,45% աճ:

2003 թվականին ջերմային էներգիայի արտադրության աճը (հավելված N2) պայմանավորված է «Նաիրիտ» ՓԲԸ-ով և ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի պահանջարկի ավելացմամբ: 2003 թվականին կանխատեսվում է ջերմային ցանցերում նախորդ տարվա համեմատությամբ կորուստների 5,63% նվազում:

Բնական գազի հաշվեկշիռը տրված է N3 հավելվածում: Ներկրվող գազի ծավալը 2003 թվականին նախորդ տարվա համեմատությամբ կաճի ընդամենը 2,0%-ով: Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաև գազատարների առանձին հատվածների նախատեսվող հիմնական նորոգումների իրականացման շնորհիվ բնական գազի տեխնոլոգիական կորուստները և սեփական կարիքների ծախսը նախորդ տարվա համեմատությամբ կնվազի 1,46% -ով: Կանխատեսվում է նաև բնական գազի սպառման 5,63% աճ:

2003 թվականին սպառողների համար էլեկտրական ու ջերմային էներգիայի և բնական գազի սակագների փոփոխություն չի նախատեսվում:

2.Էներգետիկայի բնագավառի ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն

Էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, հանդիսանալով հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հնարավորություն է տալիս ներկայացված ֆինանսական հաշվետվություններում և տեղեկատվական ձևերում առկա տեղեկատվությունների հիման վրա գնահատել ընկերությունների, ինչպես նաև ամբողջ էներգետիկայի բնագավառի ֆինանսական վիճակը և օժանդակել կարգավորմանը վերաբերող որոշումների ընդունմանն ու ընկերությունների գործունեության արդյունքների գնահատմանը:

Ֆինանսատնտեսական վերլուծությունը նպատակաուղղված է հետևյալ խնդիրների իրականացմանը.

- սակագնային քաղաքականության իրականացման, սակագների սահմանման և վերանայման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշների և տեղեկատվական բազայի ստեղծում,
- լիցենզավորվող ընկերությունների կանխատեսվող ֆինանսական ցուցանիշների և գործարարության ծրագրի գնահատում,
- լիցենզիայի պայմանների վերահսկման գործառույթների իրականացում,

-էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հիման վրա բնագավառի ֆինանսական վիճակի գնահատում, գործունեության արդյունավետության և ֆինանսական վիճակի կանխատեսումային գնահատում:

2001 թվականի ընթացքում հանրապետությունում արտադրվել է 5744 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որից արտադրող կայաններում սեփական կարիքների համար օգտագործվել է 391,6 մլն կՎտժ կամ արտադրված էլեկտրական էներգիայի 6,8 %-ը: Արտադրող կայաններից էլեկտրաէներգիայի օգտակար առաքումը կազմել է 5352,4 մլն կՎտժ(տե՝ս աղ.1): Բարձրավոլտ էլեկտրացանցեր մուտք է գործել 5682,7 մլն կՎտժ էլեկտրական էներգիա՝ ներառյալ Իրանից 330,2 մլն կՎտժ էլեկտրաէներգիայի ներհոսքը: Բարձրավոլտ էլեկտրացանցերում տեխնոլոգիական կորուստները կազմել են 341,3 մլն կՎտժ կամ մուտքի նկատմամբ 6,0%: էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը բարձրավոլտ էլեկտրացանցերից կազմել է 5341,4 մլն կՎտժ, որից 4596,6 մլն կՎտժ առաքվել է բաշխիչ ցանցերին, 43,8 մլն կՎտժ՝ այլ սպառողներին (կայանների տնտեսական կարիքներ և այլն), իսկ արտահոսքը Իրան և արտահանումը Վրաստան կազմել են 700,9 մլն կՎտժ: Գույքագրված առաքումը բաշխիչ ցանցերից սպառողներին կազմել է 3435,76 մլն կՎտժ:

Աղյուսակ 1

		2001թ. սակագնում նախատեսված	2001թ. փաստացի	2000թ. փաստացի	2001 և 2000թթ տարբերություն
		մլն կՎտժ	մլն կՎտժ	մլն կՎտժ	3-4
	1	2	3	4	5
1	Հրազդանի ՋԷԿ	1355,1	2336,2	2120,3	215,9
2	Երևանի ՋԷԿ	353,0	244,1	359,8	-115,7
3	ՀԱԷԿ	2277,0	1814,5	1836,7	-22,2
4	Սևան-Հրազդանյան կասկադ	323,0	303,5	367,0	-63,4
5	Որոտանի ՀԷԿՀ	820,0	526,9	777,6	-250,8
6	Փոքր ՀԷԿ - եր	65,0	73,1	54,9	18,2
7	ՋորաՀԷԿ	66,0	54,1	50,4	3,8
8	Ներհոսք	0,0	330,2	352,0	-21,8
9	էլեկտրաէներգիայի մուտքը բարձրավոլտ էլեկտրացանց	5259,1	5682,6	5918,6	-236
10	Կորուստները բարձրավոլտ էլեկտրացանցում	276,1	341,8	337,5	4,3
		5,2%	6,0%	5,7%	
11	էլեկտրաէներգիայի օգտակար առաքումը բարձրավոլտ էլեկտրացանցից, որից	4983,0	5341,4	5581,1	-239,7
12	1. Այլ սպառողներ	11,0	43,8	24,1	19,7
13	2. Արտահոսք	108,0	700,9	814,9	-113,9
14	3. Բաշխիչ ցանցեր	4864,0	4596,6	4742,1	-145,5

15	Կորուստները բաշխիչ էլեկտրացանցում	508,3	1160,8	1167,1	-6,2
		10,4%	25,3%	24,6%	
16	էլեկտրաէներգիայի առաքումը բաշխիչ ցանցերից	4355,8	3435,8	3575,0	-139,2

2001թվականի ընթացքում բարձրավոլտ էլեկտրացանցեր է առաքվել 236 մլն Կվտժ-ով (4,0%) պակաս էլեկտրաէներգիա, քան 2000 թվականի ընթացքում: Արտադրության ծավալների կրճատումը պայմանավորված է եղել սպառման և արտահանման ծավալների նվազմամբ: Բաշխիչ ցանցերին էլեկտրական էներգիայի առաքումը նվազել է 145.5 մլն կՎտժ-ով (3.1%) , իսկ էլեկտրական էներգիայի արտահանումը՝ 113.9 մլն կՎտժ-ով (14%):

Ստորև ներկայացվում է արտադրող կայաններից էլեկտրական էներգիայի առաքման կառուցվածքների համեմատությունը 2000-2001թվականներին

էլեկտրական էներգիայի առաքման կառուցվածքը 2000թ.



էլեկտրական էներգիայի առաքման կառուցվածքը 2001թ.



Ինչպես երևում է վերը բերված համեմատությունից, 2001 թվականի ընթացքում Սևան-Հրազդանյան կասկադը և Որոտանի ՀԷԿ-երի համալիրը 314.2 մլն կՎտժ-ով (27 %) նվազեցրել են էլեկտրաէներգիայի առաքումը բարձրավոլտ էլեկտրացանցեր, որը պայմանավորված է եղել բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, իսկ ՀԱԷԿ-ը՝ 22.2 մլնկՎտժ-ով (1.2%), որը պայմանավորված է եղել ընթացիկ նորոգումների ժամկետների երկարաձգմամբ:

Այս պայմաններում «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ում ավելացել է էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը հանգեցրել է լրացուցիչ ֆինանսական ծախսումների, քանի որ «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ի էլեկտրաէներգիայի առաքման սակագինը մի քանի անգամ ավելի բարձր է, քան հիդրոէլեկտրակայաններից առաքված և 1.7 անգամ ավելի բարձր, քան ՀԱԷԿ-ից առաքված էլեկտրաէներգիայի սակագինը:

2001 թվականի ընթացքում բաշխող համակարգում տեխնոլոգիական (նորմատիվային) և գերնորմատիվային կորուստների աճի միտում է արձանագրվել (տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

		Չափի միավոր	1999թ.	2000թ.	2001թ.
	1	2	3	4	5
1	*էլեկտրաէներգիայի մուտքը բաշխիչ ցանցեր*	մլն կՎտժ	4719,00	4742,09	4596,61
2	Ընդամենը՝ կորուստներ	%	***23,1%***	***24,6%***	***25,3%***
		մլն կՎտժ	1090,70	1167,09	1160,85
3	Տեխնոլոգիական կորուստներ	%	***10,7%***	***11,4%***	***11,6%***
		մլն կՎտժ	504,03	539,3	535,17
4	Գերնորմատիվային կորուստներ	%	***12,4%***	***13,2%***	***13,6%***
		մլն կՎտժ	586,67	627,78	625,68
5	Օգտակար առաքում	մլն կՎտժ	3628,30	3575,01	3435,76

Գերնորմատիվային կորուստների պատճառով բաշխիչ ցանցերի չստացված հասույթը 2001թվականին կազմել է 15172,7 մլն դրամ (չստացված հասույթը հաշվարկվել է՝ ելնելով այն իրատեսական գնահատականից, որ գերնորմատիվային կորուստների 85%-ը կիրացվեր 25 դրամ/կՎտժ սակագնով՝ 13295,7 մլն դրամ, իսկ 15%-ը՝ 20 դրամ/կՎտժ-ով՝ 1877 մլն դրամ)):

2001 թվականի գործունեության արդյունքում բաշխող ընկերությունների փաստացի հավաքագրումը կազմել է 58,74 մլրդ դրամ կամ գույքագրված ապրանքային առաքման 81%-ը:

Չհավաքագրումների պատճառով 2001 թվականին բաշխիչ ցանցերի չստացված հասույթը կազմել է 13754 մլն դրամ: Ինչպես ցույց է տալիս դեբիտորական պարտքի դինամիկան (տե՛ս աղ. 3), վերջին երեք տարվա ընթացքում այն աճի միտում ունի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեբիտորական պարտքի աճի գերակշիռ մասը հավելագրումների արդյունք է (մեր գնահատմամբ շուրջ 60%-ը), ապա դրա գանձումը նույնպես կասկածելի է:

2001թվականի ընթացքում, ըստ հաշվետվությունների, բաշխիչ ցանցերի կողմից սեփական կարիքների համար ծախսվել է 70,1 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, այն դեպքում, երբ դրանց նորմատիվային տարեկան ցուցանիշը կազմում է 17,4 մլն կՎտժ: Այսինքն, սեփական կարիքների համար հաշվեգրված 52,7 մլն կՎտժ էլեկտրական էներգիան, որը ծախսագրվել է զրոյական սակագնով, նույնպես «քողարկված» գերնորմատիվային կորուստ է: Այսպիսով, սեփական կարիքների

ծախսի հավելագրման պատճառով ընկերության չստացված հասույթը կազմում է 1317,5 մլն դրամ:

2001 թվականի ընթացքում առաքված էլեկտրական էներգիայի՝ ըստ լարման խմբերի և գիշերային-ցերեկային սպառման դիմաց, բաշխիչ ցանցերի կողմից սխալ ձևակերպումների պատճառով (ինչի հետևանքով վաճառքի փաստացի սակագինը կազմել է 21,1 դրամ/կՎտժ՝ հաշվարկային միջին 21,58 դրամ/կՎտժ-ի դիմաց) չստացված հասույթը կազմել է շուրջ 1200 մլն դրամ:

Այսպիսով, 2001 թվականին բաշխիչ ցանցերի չստացված ընդհանուր հասույթը կազմել է 31444 մլն դրամ կամ 54 մլն ԱՄՆ դոլար:

Եթե ընդունենք, որ չստացված հասույթի 85%-ը 25 դրամ/կՎտժ արժողությամբ էլեկտրական էներգիա է, իսկ 15%-ը՝ 20 դրամ/կՎտժ, ապա էլեկտրական էներգիայի քանակը, որից հասույթ չի ստացվել, կկազմի 1305 մլն կՎտժ, որը բաշխիչ ցանց մուտք գործած էլեկտրական էներգիայի 28%-ն է:

Ստորև ներկայացվում է բաշխիչ ցանցերի 1999-2001թթ. չստացված հասույթի դինամիկան.

		1999թ.	2000թ.	2001թ.
Հաշվարկային հասույթ	մլրդ դրամ	94,2	93,73	89,98
Փաստացի հավաքագրում	մլրդ դրամ	74,5*	59,13	58,74
Չստացված հասույթ, որից	մլրդ դրամ	19,7	34,6	31,44
գերնորմատիվային կորուստների պատճառով	մլրդ դրամ	14,23	15,22	15,17
դեբիտորական պարտքի աճ	մլրդ դրամ	3,97	16,7	13,75
սեփական կարիքների գերնորմատիվային ծախսի արժեք	մլրդ դրամ	0,5	0,6	1,3
էլեկտրական էներգիայի վաճառքի գնային խախտումների արժեք	մլրդ դրամ	1	2,13	1,2
Չստացված հասույթի տոկոսը հաշվարկային հասույթի նկատմամբ, որից	%	20,9%	36,9%	34,9%
գերնորմատիվային կորուստների պատճառով	%	15,1%	16,2%	16,9%
դեբիտորական պարտքի աճ	%	4,2%	17,8%	15,3%
սեփական կարիքների գերնորմատիվային ծախսի արժեք	%	0,5%	0,6%	1,5%

էլեկտրական էներգիայի վաճառքի գնային խախտումների արժեք	%	1,1%	2,3%	1,3%

* բաշխիչ ցանցերի 1999 թվականի հավաքագրումներում ներառված են խմելու և ոռոգման ջրերի համակարգերի նախորդ տարիներին կուտակված դեբիտորական պարտքի դիմաց 5193,8 մլն դրամի վճարումները:

Բաշխիչ ցանցերում չհավաքագրումները հանգեցրել են դեբիտորական

		Դեբիտորական պարտքը առ 01.01.02թ.	% ամբողջից	Դեբիտորական պարտքի աճը 2001թ. ընթացքում	% ամբողջից
1	Բնակչություն	23,2	33%	4,40	32%
2	Բյուջե	4,20	6%	0,70	5%
3	Արդյունաբերություն	7,00	10%	2,20	16%
4	Տրանսպորտ	1,10	2%	0,15	1%
5	Ոռոգում, որից՝	15,05	21%	3,00	22%
5.1	*Համայնքային ոռոգում*	11,68	16%	2,60	19%
6	Խմելու ջուր	14,00	20%	4,00	29%
7	Այլ սպառողներ	6,60	9%	-0,70	-5%
8	Ընդամենը	71,15	100%	13,75	100%

պարտքի աճի, որը 2002 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 71,15 մլրդ դրամ:

2001 թվականի ընթացքում դեբիտորական պարտքը աճել է 13,75 մլրդ դրամով: Ընդ որում, ամենամեծ աճը արձանագրվել է խմելու ջրի և ոռոգման համակարգերում՝ 7,0 մլրդ դրամ և բնակչության մասով՝ 4,0 մլրդ դրամ:

Բաշխիչ ցանցերում գոյություն ունեցող հավաքագրման ցածր և գերնորմատիվային կորուստների բարձր մակարդակի պատճառով համակարգի մյուս օղակների նկատմամբ պարտավորությունների չկատարումը փոխադարձ շղթա է առաջացրել բաշխող ցանցեր - Հայէներգո - բարձրավոլտ էլեկտրացանցեր - արտադրող կայաններ - բնական գազ մատակարարող ընկերություններ համակարգում:

Ստորև ներկայացվում է ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացված՝ համակարգի ֆինանսական ճեղքվածքի վերլուծությունը (պարտքերի կազմում ներառված չեն ներհամակարգային պարտքերը).



2001 թվականի և նախորդ տարիների ընթացքում համակարգում գոյացել է 109,1 մլրդ դրամ կրեդիտորական պարտք, որի մարման համար առկա հուսալի դեբիտորական պարտքը՝ 36,47 մլրդ դրամ, բավարար չէ: Արդյունքում առաջացել է 72,63 մլրդ դրամի ֆինանսական ճեղքվածք, որը ընթացիկ գործունեության արդյունքներով մարել հնարավոր չէ: Այն մարելու համար համակարգը չունի ֆինանսական ռեսուրսներ: Անհրաժեշտ է մշակել հատուկ մոտեցումներ, որոնք կներառեն ինչպես կառավարության աջակցությունը, այնպես էլ միջազգային կազմակերպությունների վարկային միջոցները: Այժմ մշակման փուլում գտնվող համակարգի առողջացման ծրագրերի առաջնային խնդիրներից է հանդիսանում ճեղքվածքի մարման մեխանիզմների մշակումը և նոր պարտքերի առաջացման կանխարգելումը:

Մեր կարծիքով նոր պարտքերի առաջացումը կարելի է կանխարգելել ֆինանսական հոսքերի կառավարման նոր մեխանիզմների ներդրմամբ և համակարգի ընկերությունների մասնավորեցմամբ:

Համակարգում գերնորմատիվային կորուստների և չհավաքագրումների հետևանքով առաջացած ֆինանսական միջոցների պակասը հանգեցրել է շահագործման և պահպանման ծախսերի թերակատարման:

Ստորև ներկայացվում է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների 2001 թվականի սակագնով սահմանված և փաստացի հաշվեգրված շահագործման և պահպանման ծախսերի կառուցվածքը.

սակագնով սահմանված



փաստացի հաշվեգրված



Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն կատարվել հիմնականում նորոգման և նյութական ծախսերը, ինչն իր հերթին անդրադարձել է էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության, հաղորդման և բաշխման գործընթացների ապահովման վրա:

Նշված իրավիճակի շտկմանն ուղղված միջոցառումների իրականացումը հրատապ խնդիր է ոչ միայն էներգետիկայի բնագավառի, այլ նաև հանրապետության ամբողջ տնտեսության համար:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում են ունենալու 2003 թվականին: Էներգետիկայի բնագավառի ընկերություններում կներդրվի անկախ փորձագետների հետ համատեղ մշակված՝ լիցենզավորված գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների վերահսկման համակարգ, որը ենթադրում է ազգային հաշվային պլանին համապատասխանեցված և կարգավորմանը

վերաբերող հաշիվների և ենթահաշիվների համակարգի ներդրում: Կարգավորմանը վերաբերող հաշիվների և ենթահաշիվների ներդրումը, հանդիսանալով ֆինանսական տեղեկատվության կազմակերպման համակարգի կարևորագույն տարրը, հնարավորություն կտա գրանցելու և դասակարգելու հաշվարկված բազային տվյալները և համապատասխան վերլուծական մշակումներից հետո ապահովելու կարգավորման խնդիրներից բխող գնահատումների և տեղեկատվությունների մի ամբողջություն:

2003 թվականին նախատեսվում է լիցենզավորված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական տեղեկատվությունների ձևերի կատարելագործում՝ համապատասխանեցված ազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին և շաղկապված կարգավորման հաշիվների (ենթահաշիվների) համակարգի հետ: Ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների ձևերի կատարելագործմամբ հնարավորություն կստեղծվի կիրառել ֆինանսական վերլուծության նոր մեթոդներ և ներդնել ֆինանսատնտեսական վերահսկման ընդգրկուն համակարգ:

Լիցենզավորված գործունեության արդյունքների վերահսկման ֆինանսատնտեսական համակարգի ներդրումը պայմանավորված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով հանձնաժողովին վերապահված՝ ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների տվյալների հավաստիության ապահովման նպատակով լիցենզավորված անձանց գործունեության արդյունքների հաշվեքննության հետ կապված ընթացակարգերի մշակմամբ և ներդրմամբ:

Վերը նշված ձեռնարկումներն իրականացվելու են՝ հաշվի առնելով այլ երկրների կարգավորող մարմինների փորձը և անկախ խորհրդատվական ընկերությունների ներգրավմամբ:

3.Իրավաբանական -լիցենզիոն գործունեություն

Բնագավառի իրավական դաշտի կատարելագործման նպատակով 2003 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից կմշակվեն և կլրամշակվեն մի շարք նորմատիվ-իրավական փաստաթղթեր, այդ թվում՝

1. Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ պարտադիր միացյալ շուկայի պայմանագրի, շուկայի կանոնների և դրանց կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակում, մասնավորապես՝

   -հաշվառման և հաշվարկային ծառայության իրականացման կարգ,

-ֆինանսական հոսքերի կառավարման (ֆոնդերի վարչարարության) կարգ,

-շուկայի գործունեության կարգ,

-համակարգի շահագործման կարգ,

-էլեկտրական ցանցին միացման կարգ և այլն:

2. Գործող պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների վերամշակում և նոր պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների մշակում, մասնավորապես՝

-էլեկտրաէներգիայի առուվաճառքի՝ արտադրող-մեծածախ գնորդ-վաճառող, բնակչության, մինչև 1000 Վ այլ սպառողների և բարձր լարման սպառողների համար պայմանագրերի օրինակելի ձևերի լրամշակում,

-բնական գազի փոխադրում, բաշխում իրականացնելու, բնական գազի առուվաճառքի վաճառող-սպառող (գնորդ), կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ) պայմանագրերի օրինակելի ձևերի լրամշակում,

-շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրի օրինակելի ձևի լրամշակում,

-համակարգի օպերատորի և շուկայի մասնակիցների միջև ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևի մշակում,

-հաշվարկային կենտրոնի և շուկայի մասնակիցների միջև ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևի մշակում,

-պայմանագրային կենտրոնի և շուկայի մասնակիցների միջև ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևի մշակում:

3. Առկա գործունեության լիցենզիաների վերամշակում և նոր գործունեության լիցենզիաների մշակում, մասնավորապես՝

-էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման գործունեության լիցենզիայի լրամշակում,

-էլեկտրական և (կամ) ջերմային էներգիայի (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային համակցված էներգիայի արտադրության) արտադրական

հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիաների լրամշակում,

-էլեկտրական էներգիայի (հզորության), ջերմային էներգիայի արտադրության գործունեության լիցենզիաների լրամշակում,

-էլեկտրական էներգիայի հաղորդման, բնական գազի և ջերմային էներգիայի փոխադրման գործունեության լիցենզիաների լրամշակում,

-բնական գազի, ջերմային էներգիայի բաշխման գործունեության լիցենզիաների լրամշակում,

-«Հայէներգո» ՓԲԸ-ի գործունեության լիցենզիայի վերանայում և նոր գործունեության լիցենզիայի տրամադրում,

-հաշվարկային կենտրոնի, պայմանագրային կենտրոնի, համակարգի օպերատորի գործունեության լիցենզիաների մշակում:

4. էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (ԷՄՕԿ), ջերմային էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (ՋՄՕԿ) և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (ԳՄՕԿ) լրամշակում :

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի համապատասխան որոշմամբ ընդունվել է ՀՀ էներգետիկայի բնագավառում լիցենզավորման նոր կարգ, որով հնարավորինս պարզեցվել է համապատասխան գործունեության լիցենզիա ստանալու ընթացակարգը և նվազեցվել է լիցենզավորման համար ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի քանակը:

1999 թվականից առ այսօր ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից տրվել է 93 հատ գործունեության լիցենզիա: Վերը նշված կարգի ներդրումը կխթանի ՀՀ էլեկտրաէներգետիկայի բնագավառում ներդրումների իրականացումը և նոր գործունեության լիցենզիաների տրամադրումը: ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից տրված և կանխատեսվող գործունեության լիցենզիաների քանակը կարելի է արտացոլել ըստ ստորև բերված գրաֆիկի.



* 1999 թվականին տրված գործունեության լիցենզիաների քանակը պայմանավորված է նրանով, որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող բոլոր տնտեսավարող սուբյեկտները լիցենզավորվել են ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից:

4.Լիցենզավորված գործունեության վերահսկում

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հիմնական գործառույթներից մեկը լիցենզիաների պայմանների կատարման վերահսկումն է: Այս գործառույթն ուղղված է լիցենզավորված ընկերությունների գործունեության թերությունների բացահայտմանը՝ միաժամանակ նպաստելով դրանց վերացման գործընթացին: Այս ենթատեքստում լիցենզիայի պայմանների կատարման վերահսկումը հաջորդ տարում նպատակաուղղված կլինի.

- սպառողների և էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց շահերի հավասարակշռվածության առավել բարձր մակարդակի ապահովմանը՝ սպասարկման որակի նկատմամբ նոր պահանջների սահմանման և կարգավորվող սակագներում ներառվող ծախսերի

հիմնավորվածության աստիճանի ավելի մանրամասն ուսումնասիրության միջոցով,

- նվազագույն ծախսերով էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովմանը,
- նպաստելու ընկերությունների տեխնիկական վերազինման գործընթացին՝ միջազգային շուկայում առկա նոր՝ էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման առումով,
- տեղական էներգետիկական պաշարների տարատեսականացմանը և առավել էժան արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործմանը,
- տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի և սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաների ներդրմանը:

Առավել մեծ ուշադրություն կդարձվի սպառողներին մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի ցուցանիշների վերահսկմանն ու կատարելագործմանը՝ բացառելու էլեկտրական, ջերմային էներգիա կամ բնական գազ մատակարարող ընկերությունների կամայականությունները սպառողների նկատմամբ՝ նպաստելով մատակարար-սպառող հարաբերությունները իրավական դաշտում կառուցելուն: Լիցենզավորված ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերլուծության արդյունքում կգնահատվեն սպառողներին մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի ցուցանիշները, որի հիման վրա կձեռնարկվեն առավել արդյունավետ միջոցներ սպառողների էներգամատակարարման չհիմնավորված ընդհատումների կանխման, նրանց դիմում-բողոքներին արձագանքելու ժամանակահատվածի կրճատման, մատակարարված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի որակը չպահպանելու հետևանքով սպառողներին հասցված վնասի փոխհատուցման ուղղությամբ:

Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել նաև լիցենզավորման հայտերով ներկայացվող ֆինանսատնտեսական փաստաթղթերի մոնիթորինգ, որի նպատակն է իրատեսորեն գնահատել կատարված կապիտալ ներդրումների ծավալները, շահագործման և պահպանման ծախսերը: Խորացվելու է զարգացման

ներդրումային ծրագրերի բազմակողմանի վերլուծությունը՝ ապագայում սպառողներին մատակարարվող էներգիայի ու բնական գազի սակագների կտրուկ աճը բացառելու նպատակով:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կշարունակի մնալ փոքր հիդրոէներգետիկայի բնագավառը և, բնականաբար, աշխատանքներ կտարվեն այդ բնագավառում նոր ներդրողներ ներգրավելու ուղղությամբ:

1997 թվականից սկսած փոքր ՀԷԿ-երի սեփականաշնորհման գործընթացի և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որդեգրած քաղաքականության շնորհիվ Հայաստանում նոր թափ է ստացել սեփականաշնորված փոքր ՀԷԿ-երի վերագործարկումը և նորերի կառուցումը: Նման կայանների կառուցումը ոչ միայն բարձրացնում է երկրի էներգետիկ անկախությունը, այլ նաև տարածաշրջանում ստեղծում է որոշակի դրական սոցիալ-տնտեսական արդյունք:

Որոշակի վերանորոգման աշխատանքներից հետո արդեն վերագործարկվել են սեփականաշնորհված 13 փոքր ՀԷԿ-եր՝ շուրջ 28700 կՎտ հզորությամբ: Սեփականաշնորհված փոքր ՀԷԿ-երում աստիճանաբար իրականացվող տեխնիկական վերազինման և արդիականացման գործընթացների շնորհիվ տարեցտարի աճում է նրանցում արտադրվող էլեկտրաէներգիայի քանակությունը: Այսպես, 1997 թվականին փոքր ՀԷԿ-երը, ունենալով 28750 կՎտ ընդհանուր հզորություն, ազգային էլեկտրացանց են առաքել ընդամենը 8,6 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, 1998 թվականին՝ նույն հզորության պարագայում՝ 49,66 մլն կՎտժ, իսկ 1999 թվականին՝ 59,28 մլն կՎտժ: 2000 թվականի ընթացքում նոր փոքր ՀԷԿ-երի գործարկման արդյունքում ընդհանուր հզորությունը կազմել է 31350 կՎտ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 62,28 մլն կՎտժ: 2001 թվականին փոքր ՀԷԿ-երը՝ ունենալով 33800 կՎտ հզորություն, արտադրել և ազգային ցանց են առաքել 75,85 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, իսկ 2002 թվականի ընթացքում՝ արդեն 35900 կՎտ ընդհանուր հզորությամբ, ազգային ցանց կառաքեն մոտ 90 մլն կՎտժ: Բացի այդ, ներկայումս կառուցման փուլում են գտնվում 11 փոքր ՀԷԿ-եր՝ 25350 կՎտ ընդհանուր հզորությամբ, որոնց գործարկումից հետո տարեկան կարտադրվի ևս 110,0 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Սակայն դեռևս առկա են լուծում պահանջող մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում կամ կարող են խոչընոտել փոքր ՀԷԿ-երի կառուցման գործընթացը: Դրանցից հիմնականը ներդրողի կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տարատեսակ թույլտվություններ ստանալն է, որի համար տևական ժամանակ է

պահանջվում՝ հանգեցնելով անհարկի ձգձգումների: Այս ենթատեքստում լուծում պահանջող խնդիրներից է հողօգտագործման, ջրօգտագործման թույլտվությունների և կառուցման լիցենզիաների տրամադրման միասնական կամ փաթեթային տարբերակի ներդրման հնարավորությունը: Նման մոտեցումն անհրաժեշտ է, քանի որ գործող իրավական դաշտը հնարավորություն է տալիս հողօգտագործման թույլտվություն ունենալու դեպքում ՀԷԿ չկառուցել կամ ձգձգել նրա կառուցումը, դրանով իսկ խոչընդոտել այլ ներդրողի կողմից նույն վայրում ՀԷԿ-ի կառուցումը:

Այս առումով համաձայնություն է ձեռք բերվել և ՀՀ բնապահպանության նախարարության հետ՝ ջրօգտագործման թույլտվության ժամկետը համապատասխանեցնել լիցենզիայի գործողության ժամկետի հետ: Ներկայումս այն կիրառվում է, սակայն հողօգտագործման թույլտվությունների առումով խնդիրը դեռևս լուծման կարիք ունի:

Հանձնաժողովը Լոռու մարզպետարանի հետ համատեղ մշակել է մարզի փոքր հիդրոէլեկտրակայանների ցանցի նախագծման և ներդրման ծրագիր, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, և համատեղ աշխատանքներ են տարվում այն իրականացնելու ուղղությամբ: Ծրագրի իրականացման ընթացքում կուտակած փորձը հնարավորություն կտա առաջիկայում համանման ծրագրեր իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է նաև հողմաէներգետիկայի բնագավառը, որտեղ արդեն հետազոտություններ են կատարվում առաջին հողմաէլեկտրակայանի տեղակայման վայրի որոշման ուղղությամբ: Հակված ենք կարծելու, որ 2003 թվականին կսկսվեն առաջին հողմաէլեկտրակայանի կառուցման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքը վկայում է, որ Հայաստանում հնարավոր է կառուցել մոտ 150 ՄՎտ գումարային հզորությամբ հողմաէլեկտրակայաններ:

Մինչ օրս պատշաճ լուծում չի ստացել նաև կենտրոնացված ջերմամատակարարման միջոցով բազմաբնակարան շենքերի ջեռուցման խնդիրը՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Սակայն անառարկելի փաստ է, որ կենտրոնական ջեռուցումը բնակարանների ջեռուցման ամենաարդյունավետ միջոցն է, քանի որ առկա բազմաբնակարան շենքերը նախագծված և կառուցված են ջեռուցման կենտրոնացված համակարգի հաշվարկով, ուստի դրա բացակայությունը կհանգեցնի շենքերի կոնստրուկցիաների ավելի արագ մաշվածության՝ բոլոր անցանկալի հետևանքներով: Ուստի

հանձնաժողովը կշարունակի աջակցել ջերմամատակարարման ծրագրերի ներդրման գործընթացին:

Վերջին տարիներին հանրապետության գազամատակարարման հարկադիր դադարի հետևանքով բնակարանների գազամատակարարման վերականգնումը կապված է տեխնիկատնտեսական և անվտանգության պահանջների, ինչպես նաև կազմակերպական համալիր խնդիրների լուծման հետ, որոնք ներկայումս խոչընդոտում են գործընթացի ծավալմանը: Հանձնաժողովը այս հարցում ևս կշարունակի համագործակցությունը շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների հետ:

Վերը թվարկված խնդիրների արդյունավետ լուծումը հնարավոր է միայն ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերում առկա և անհետաձգելի կարգավորում պահանջող հիմնախնդիրների վերաբերյալ անհրաժեշտ և մանրամասն տեղեկատվության առկայության դեպքում: Այս խնդիրների լուծումը հանձաժողովը նախատեսում է իրականացնել լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով՝ ժամանակին և հնարավորինս արդյունավետ օգտագործելով միջազգային փորձը, ինչպես նաև համագործակցելով միջազգային խորհրդատվական կազմակերպությունների հետ:

5.ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ներդրում

Բաշխիչ ցանցի մասնավորեցումը, որն առաջին գործնական քայլն է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխման ուղղությամբ, հանձնաժողովին նոր խնդիրներ է առաջադրում՝ ամբողջ համակարգի կարգավորման տեսանկյունից: Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ընկերությունների համատեղ, արդյունավետ գործունեություն ապահովող միասնական համակարգ, որը պետք է բավարարի հետևյալ պայմանները.

-համակարգի անվտանգ, հուսալի աշխատանք,

-հավասար պայմաններ յուրաքանչյուր սուբյեկտի գործունեության համար,

-հիմնավորված սակագներ,

-համակարգի ֆինանսական կայունություն, որը մասնավոր ներդրումների համար անհրաժեշտ երաշխիքներից մեկն է,

-կանոնակարգված և թափանցիկ ֆինանսական հոսքեր, որոնք նախադրյալներ կստեղծեն բաշխողի կողմից օրենքով սահմանված 100% վճարումների համար:

էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի ներդրումը փուլային և շարունակական գործընթաց է, որը ենթադրում է կարգավորման մեխանիզների կատարելագործում, այդ թվում՝ պայմանագրային հարաբերությունների էական փոփոխություններ:

Կապված բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործընթացի ավարտի հետ, էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխման առաջիկա փուլում շեշտը դրվում է համակարգի ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման վրա՝ ժամանակավորապես պահպանելով «Հայէներգո» ՓԲԸ-ի միայնակ գնորդ-վաճառողի կարգավիճակը:

էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացման հաջորդ քայլը շուկայի մասնակիցների միջև փուլային համաձայնագրի կնքումն ու միասնական մեծածախ շուկայի ձևավորումն է: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում շուկայի նոր կառուցվածքի ներդրման համար անհրաժեշտ մի շարք նորմատիվ -իրավական փաստաթղթերի մշակման ուղղությամբ:

6.Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովի՝ հասարակության հետ տարվող աշխատանքներն ուղղված են լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների, էներգիայի ու բնական գազի մատակարարման հետ կապված, այդ թվում՝ սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման խնդիրներին:

Հանձնաժողովում գործում է «հրատապ հեռախոս», որի միջոցով սպառողները տեղեկացնում են էներգամատակարարման բնագավառում ծագած խնդիրներին: Սպառողների հետ կապի ծառայությունը այդ խնդիրների վերաբերյալ տալիս է համապատասխան տեղեկատվություն կամ օպերատիվ լուծում, իսկ անհրաժեշտության դեպքում առաջարկում է դիմել գրավոր՝ բարձրացված հարցերին սահմանված կարգով լուծում տալու համար: Ծառայության աշխատակիցները մասնակցում են հասարակական զանազան միջոցառումների, որոնց ժամանակ սպառողների շրջանում բացատրական աշխատանք է տարվում իրենց իրավունքներին ծանոթացնելու, ինչպես նաև «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին և դրանից բխող իրավական ակտերին իրազեկելու ուղղությամբ:

Ինչպես ցույց է տալիս տարիների աշխատանքի փորձը, էներգետիկայի բնագավառի և սպառողների իրավունքների վերաբերյալ տպագիր նյութերի քանակը բավարար չէ, և միշտ չէ, որ դրանք հասու են բնակչությանը, կամ էներգակիրների մատակարարման և օգտագործման կանոնները հաճախ պարունակում են բարդ իրավական և տեխնիկական մանրամասներ, որոնք ոչ միշտ են միանշանակորեն հասկանալի սպառողների լայն շերտերի համար: Ուստի փորձ է արվում միջոցներ հայթայթել 2003 թվականին այդ թեմաներով հրապարակելու հանրամատչելի թերթիկներ ու գրքույկներ և անհատույց բաժանելու բնակչությանը:

Բավարար չեն մարզերի բնակչության իրազեկման և իրենց իրավունքների պարզաբանման հետ կապված աշխատանքները, և անհրաժեշտ է 2003 թվականին ակտիվացնել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները:

2002 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանձնաժողովում ստացվել են 131 բողոք և հարցադրում, որոնցից 113-ը՝ բնակչությունից, 18-ը՝ իրավաբանական անձանցից: Դրանցում բարձրացված հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծ մասի խնդրո առարկան, ինչպես և նախորդ տարիներին, էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրումն է, հաշվառքի սարքերի ստուգման, վերանորոգման ու փոխարինման

խնդիրները, մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը: Թեև միշտ չէ, որ բաշխիչ ընկերությունները օրենքով սահմանված ժամկետներում և օրենքի ու իրավական ակտերի շրջանակներում են պատասխանում հանձնաժողովի նամակներին, սակայն բոլոր բողոքներն ու հարցադրումները սահմանված կարգով քննարկվել են՝ ստանալով համապատասխան լուծումներ:

7.Զանգվածային լրատվամիջոցների , հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ

Հանձնաժողովը զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցում է հրապարակայնության ու լրատվության մատչելիություն սկզբունքով:

Զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներում նախատեսվում են մամուլի ամենօրյա վերլուծություն, էներգետիկայի համակարգի, կարգավորող հանձնաժողովի վերաբերյալ նյութերի արխիվացում և տարածում:

Աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ծրագրվել է հանձնաժողովի գործունեության վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերի միջոցով հետադարձ կապի առավել խոր ուսումնասիրություն: Նախատեսվում է նաև հասարակական լուրջ արձագանք ունեցող խնդիրների լայն քննարկում ԶԼՄ-ներով, հասարակական, քաղաքական կազմակերպությունների և միությունների հետ /կլոր սեղաններ, ասուլիսներ/ :

Ծրագրվում են միջոցառումներ՝ ուղղված ԶԼՄ-ների հետ համագործակցության զարգացմանը, հանձնաժողովի գործունեության մասին օպերատիվ, ճշմարիտ, լրատվության տարածմանը, մամլո ծառայության միջոցով հանձնաժողովի ընդունած որոշումների մասին պարբերական հրապարակումների ապահովմանը:

Արձանագրելով հանձնաժողովի՝ միջպետական համանման ծառայությունների հետ համագործակցության փոխշահավետությունը, ծրագրվում է հեռուստակամուրջների, փոխայցելությունների միջոցով լրատվության փոխանակման, խնդիրների համատեղ քննարկման հետագա ակտիվացում:

8.Համագործակցություն

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովն իր գոյության հինգ տարիների ընթացքում ակտիվորեն համագործակցում է՝ բազմակողմանի և երկկողմանի

սկզբունքներով, ԱՄՆ-ի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու Եվրասիայի երկրների համանման կառույցների և միջազգային ընկերակցությունների հետ: Գործակցության հիմնական նպատակներն են այդ կառույցների փորձի ուսումնասիրությունը կարգավորման բնագավառում, մասնագետների ուսուցումը և վերապատրաստումը: 2003 թվականին այդ գործակցությունը կշարունակվի: Կշարունակվեն նաև 2002 թվականին սկսված գործարար կապերը Արևելյան Եվրոպայի համապատասխան կառույցների հետ, մասնավորապես, Եվրամիության TACIS ծրագրի շրջանակներում:

2003 թվականին հանձնաժողովը կշարունակի մասնակցել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից կազմակերպվող տարածաշրջանային շուկայի ներդրման փորձի ուսումնասիրությանը նվիրված սեմինարներին, ինչպես նաև էներգետիկայի տարբեր բնագավառներին նվիրված միջազգային համաժողովներին:

Հանձնաժողովն ընդհանուր առմամբ դրական է գնահատում համատեղ աշխատանքը PA Consulting ընկերության հետ և ծրագրում է 2003 թվականին նույնպես օգտվել ընկերության խորհրդատվական ծառայությունից՝ համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակներում:

Այլ երկրներում շուկայական հարաբերությունների ներդրման ու մենաշնորհային բնագավառներում կարգավորող կառույցների կուտակած փորձի ուսումնասիրմանն ու կիրառմանն ուղղված գործակցությունն իրականացվում է, որպես կանոն, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների կողմից հովանավորվող դասընթացների տեսքով:

Հանձնաժողովը 2003 թվականին կշարունակի ակտիվ գործունեությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 19 երկրների կարգավորող հանձնաժողովների ընկերակցության շրջանակներում, որի սակագնային կոմիտեում կշարունակի նախագահել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահը:

Հավելված 1

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2001-2003թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2001 թ. փաստացի	2002 թ. սպասվող	2003 թ. կանխատեսվող
1	էլեկտրաէներգիայի արտադրություն	**մլն.կՎտժ**	5744,0	5860,0	5692,9
	այդ թվում՝ ՀԱԷԿ	**"-"**	1986,7	2500,0	2480,3
	ՀԷԿ-եր	**"-"**	967,0	1474,0	1342,6
	որից՝ Սևան-Հրազդանյան ՀԷԿՀ	**"-"**	308,4	320,0	326,0
	Որոտանի ՀԷԿՀ	**"-"**	529,7	1000,0	854,8
	Ջորա ՀԷԿ	**"-"**	54,4	60,0	64,8
	Մասնավոր փոքր ՀԷԿ -եր	**"-"**	74,6	94,0	97,0
	ՋԷԿ-եր	**"-"**	2790,3	1886,0	1870,0
	որից՝ Հրազդանի ՋԷԿ	**"-"**	2509,3	1641,0	1467,0
	Երևանի ՋԷԿ	**"-"**	281,0	245,0	403,0
2	էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	**մլն.կՎտժ**	391,6	395,0	392,9
	Նույնը՝ %-ով	%	6,82%	6,74%	6,90%
3	Առաքում կայաններից	**մլն.կՎտժ**	5352,4	5465,0	5300,0
4	Ներհոսք	**"-"**	330,2	150,0	200,0
5	Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր	**"-"**	5682,7	5615,0	5500,0
6	Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում	**"-"**	341,3	265,0	200,0
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	6,01%	4,72%	3,64%
7	Արտահոսք	**մլն.կՎտժ**	700,9	750,0	600,0
8	Առաքումը բաշխիչ ցանցեր	**մլն.կՎտժ**	4640,4	4600,0	4700,0
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	**մլն.կՎտժ**	1160,9	1150,0	1027,4
	Նույնը՝ %-ով 8-րդ տողի նկատմամբ	%	25,0%	25,0%	21,9%
10	Ներքին սպառում	**մլն.կՎտժ**	3479,6	3450,0	3672,6

Հավելված 2

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2001-2003թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2001թ. փաստացի	2002թ. սպասվող	2003թ. կանխատեսվող
1	Ջերմային էներգիայի արտադրությունը, ընդամենը	**հազ.Գկալ**	698,4	518,7	725
	այդ թվում՝ ՋԷԿ-երում	"-"	424,9	298,7	495
	կաթսայատներում	"-"	273,5	220,0	230,0
2	Կորուստները ջերմային ցանցերում	**հազ.Գկալ**	171,9	128,1	138
	Նույնը՝ %-ով	%	24,6%	24,7%	19,07%
3	Ջերմային էներգիայի օգտակար առաքումը այդ թվում՝	**հազ.Գկալ**	526,5	390,6	587
	Կենտրոնացված ջեռուցման համար այդ թվում՝	"-"	267,20	242,1	266
	ՋԷԿ-երից	"-"	79,2	87,1	96
	Կաթսայատներից	"-"	188,0	155,0	170
	Արդյունաբերական կարիքների համար	"-"	259,3	148,5	320

Ծանոթություն. Կաթսայատներում արտադրվող ջերմային էներգիայի քանակությունը գնահատվել է ըստ կաթսայատների
գազի կանխատեսվող պահանջարկի:

Հավելված 3

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2001-2003թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2001թ. փաստացի	2002թ. սպասվող	2003թ. կանխատեսվող
1	Բնական գազի ներկրում	մլն.ն մ ^{3}	1403,1	1209,6	1235
2	Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն.ն մ ^{3}	105,32	91,00	77
	Նույնը՝ %-ով 1-ին տողի նկատմամբ	%	7,51%	7,52%	6,2%
3	Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն.ն մ ^{3}	11,61	12,50	11
	Նույնը՝ %-ով 1-ին տողի նկատմամբ	%	0,83%	1,03%	0,89%
4	Մղվել է ստորգետնյա պահեստարաններ	մլն.ն մ ^{3}	70,0	72,83	27,0
5	Արտահանվել է պահեստարաններից	"-"	75,4	36,41	10,0
6	Բնական գազի առաքումը սպառողներին որից՝	"-"	1291,6	1069,7	1130
6,1	*Էներգետիկ համակարգ*	"-"	900,0	615,0	640
6,2	*Արդյունաբերություն*	"-"	168,5	206,3	210
6,3	*Բյուջետային կազմակերպություններ*	"-"	14,3	13,7	15
6,4	*Բնակչություն*	"-"	89,2	97,4	115
6,5	*Ջեռուցման համակարգ*	"-"	50,7	38,6	40
6,6	*Այլ սպառողներ*	"-"	68,8	98,7	110